

**Շուշանիկ Սաղյան, ք.գ.թ., դոցենտ,  
ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն  
E-mail: [shushaniksagyan@mail.ru](mailto:shushaniksagyan@mail.ru)**

### **ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

Հոդվածում քննվում են Արցախյան շարժումից հետո քաղաքական վերափոխումների լեզվական արտացոլումները՝ մասնավորապես կապված *ԼՂԻՄ/ Ղարաբաղ/Լեռնային Ղարաբաղ-Արցախ* անունների հարաբերակցության հետ, ինչպես նաև պետականության հաստատումից հետո գրական արևելահայերենի պետական և պաշտոնական գործառնությունների ստանձնման հետ: Ի հայտ եկած վարչաբանությունների լեզվական քննությունը վեր է հանում Ղարաբաղ-Արցախ անունների յուրատիպ հարաբերակցություն:

Գրական որոշ ոճերում գործառնում է նաև Ղարաբաղ-Արցախ տարբերակումը՝ ծագումնաբանական, գործառնական հիմունքներով: Հայկական-օտար, ինչպես նաև խոսակցական, բարբառային և գրական տարբերակումների հիմքի վրա նշված տեղանուններն ունեն իմաստային յուրահատուկ զարգացումներ: Քննվել են բառակազմական հարացույցի որոշ միավորներ՝ արցախահայ, դարաբաղիզացիա, դարաբաղերեն:

**Բանալի բառեր**՝ ազատ տարբերակ, բառակազմական հարացույց, բառիմաստի նեղացում, գրական աշխարհաբար, գրական ոճեր, իմաստային դաշտ, հրապարակախոսական ոճ, պաշտոնական լեզու, պետական լեզու, վարչաբանություն, օտարաբանություն:

### **III. Сагиян**

#### **ПОЛИТИЧЕСКИЕ ОТРАЖЕНИЯ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ В ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ**

В статье рассматриваются языковые отражения политических изменений в разных стилях литературного языка после Арцахского движения. В частности исследованы соотношения названий НКАО/Карабах/Нагорный Карабах - Арцах, а также государственное и официальное функционирование современного армянского языка после установления государственности НКР.

В некоторых вариантах литературного языка действуют текстовые-семантические различия названий Арцах-Карабах на основе генеологических и исторических свойств. Эти названия развивали своеобразные семантические поля. Исследованы некоторые единицы словообразовательной парадигмы из основ Арцах, Карабах.

**Ключевые слова**- варваризм, государственный язык, литературный ашхарабар, литературный стиль, официальный язык, официально-деловая лексика, публицистический стиль, свободный вариант, семантическое поле, сужение значения слова, словообразовательная парадигма.

**Shushanik Saghyan**

#### **POLITICAL REFLECTIONS OF THE ARTSAKH MOVEMENT IN THE LITERARY LANGUAGE**

The article analyses the linguistic changes in the political discourse affected by the Artsakh movement. The analysis focuses on the functions and the intercorrelation of NKAR (Nagorno Karabagh Autonomous Region), Karabagh, Nagorno Karabagh and Artsakhtoponyms in the state political discourse in Eastern Standard Armenian following the declaration of Artsakh independence.

Certain literary styles draw etymological and functional distinctions between *Karabagh* and *Artsakh*. Defined along the native-foreign, substandard – standard dichotomies, these toponyms developed specific meanings. The words are viewed within the word-building paradigm (for instance, Artsakh Armenian, Karabaghization).

*Key words-* administrative vocabulary, barbarism, narrowing of meaning, official language, semantic field, standard Ashkharhabar, social-political style, state language, paradigm of derivation  
Shushanik Saghyan- doctor of philology, chair of armenian language.

1988-ի Արցախյան շարժումը քաղաքական իրադարձություն էր: Նրա զարգացումներն ուղեկցվում էին համապետական-համախորհրդային վարքի ու աշխարհայացքի աստիճանական վերափոխումներով, հասարակական կացութաձևի վերակազմավորումներով: Ձևավորվում էր ինքնապահպանման, գոյատևման սեփական համակարգը, որն ի վերջո հասավ պետական-քաղաքական մակարդակի: Այսպիսով, Արցախյան շարժումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը<sup>1</sup>. 1.դուրս բերեց աշխարհագրական, տնտեսական ու էթնիկական ներփակ կացությունից և 2.ճանաչելի դարձրեց քաղաքականության միջազգային հարթակներում, որտեղ մեր երկիրն այդուհետ հայտնի դարձավ իբրև *Լեռնային Ղարաբաղ* կամ *Ղարաբաղ*, բնակիչները՝ դարաբաղցիներ, Լեռնային Ղարաբաղի կամ Ղարաբաղի ժողովուրդ, իսկ Շարժումից ծագած հակամարտությունը՝ դարաբաղյան կամ լեռնայինդարաբաղյան (վերջինս՝ առավելապես օտար աղբյուրներում): Շրջանառվեցին *դարաբաղյան պրոբլեմ*, *դարաբաղյան հարց*<sup>2</sup>, *Լեռնային Ղարաբաղի պրոբլեմ*<sup>3</sup>, *լեռնայինդարաբաղյան կարգավորում*<sup>4</sup> և այլ արտահայտություններ: Ակնհայտ է, որ շարունակվում էր գրական աշխարհաբարում արդեն կայունացած *Ղարաբաղ* և *Լեռնային Ղարաբաղ*՝ պատմական հիմքից հեռացած տարբերակների գործառումը : Ըստ տարածված կարծիքի՝ 17-րդ դարից տարածաշրջանում ի հայտ եկած *Ղարաբաղ* (որի ծագումն առավելապես ընդունում են պարսկական աղբյուրներից) անունը, որը լայնորեն կիրառվեց 19 -րդ դարում համակարգված գրական արևելահայերենի տարբեր ոճերում, այդուհետ ընդունելի դարձավ շրջակա էթնիկ ու վարչական կազմավորումների կողմից՝ իբրև պարսկական տարածաշրջանային ուժեղ ազդեցության հետևանք, որի ժառանգորդը ռազմական-ուժային ներգործությունն աստիճանաբար ամրակայող թուրքական գործոնն էր: *Լեռնային Ղարաբաղ* արտահայտությունն ի հայտ եկավ ավելի ուշ, երբ բացահայտ էր Ղարաբաղի լեռնային մասի էթնիկ պահպանվածությունը՝ ի տարբերություն դաշտայինի, որ հեշտությամբ էր ուժացվում օտարների կողմից: Այսպիսով, ակնհայտ է *Լեռնային Ղարաբաղ* արտահայտության քաղաքական օտար միտումը: Եվ ոչ 19-րդ, ոչ էլ 20-րդ դարերի բարբառային, խոսակցական տարբերակները և գրականի ենթատարբերակների մեծ մասը չգործառեցին այս արտահայտությունը: Այսպես է նաև *լեռնայինդարաբաղյան* կազմությունը , որը գրական հայերենում պատճենում է (нагорно-карабахский) և տարածվելու միտում չի ցուցաբերել, քանի որ հայկական գիտակցության մեջ հակամարտությունը, խնդիրը վերջին տասնամյակների հետ չեն կապվում (կոնկրետ 1920-ականների իրադարձությունները), այլ ավելի խորքային են՝ դարերի տևողությամբ: Օտարաբանություն է նաև *Հայկական Ղարաբաղ* արտահայտությունը:

Այն, որ Շարժումից հետո ԼՂԻՄ-ն ինքնաբերաբար հայտնվեց միջազգային և միջպետական հարաբերությունների ոլորտում, բնականաբար առաջ բերեց վարչական-դիվանագիտական սեփական համակարգի ստեղծման անհրաժեշտություն: Վարչաբանությունների հիմքում մնաց *Ղարաբաղ* բաղադրիչը, որը ոչ միայն միջազգայնորեն ճանաչելի էր, այլև ամրագրված անցյալի պաշտոնական վավերագրերում: Նաև այն, որ պաշտոնական ոճում գերակայում են միջազգային հարաբերություններում ընդունված ձևեր, կաղապարներ և պաշտոնական –վարչական ոճի բառերն առանձնանում են բառապաշարային ներպարփակվածությամբ և հուզարտահայտչական երանգավորում ունեցող բառերի հազվագյուտ ներթափանցմամբ<sup>5</sup>, ևս նպաստեց *Ղարաբաղ* բառի ամրակայմանը և լայն գործառումանը:

<sup>1</sup>Գիտահանրամատչելի գրականության մեջ շրջանառվում է երկգրությամբ: Բոլոր բաղադրիչներում մեծատառերի պահպանումը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ , համարվում է ավանդական. տես Գյուրջիյան Դ., Մեծատա՛ռ, թե՛ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու, Եր., 2001:

<sup>2</sup>Ղարաբաղյան հարց, Ստեփ., 1991:

<sup>3</sup>Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Եր., 1991:

<sup>4</sup>Տարասով Ս., «Լեռնային Ղարաբաղ. ո՞վ է շրջանառության մեջ դնում «Պուտին» օպերացիան», «Ազատ Արցախ», 2016, N100:

<sup>5</sup>Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 48:

Ինչպես հայտնի է, լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորված են սոցիալական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը<sup>1</sup>: Արդի գրական հայերենը, որն իբրև ազգային լեզու ԼՂԻՄ-ում սահմանափակված էր, ստացավ հասարակական լայն արժեք, իսկ ԼՂՀ պետականության հաստատումից հետո (1991թ.) ոչ միայն ստանձնեց պետական լեզվի<sup>2</sup> գործառնությունը, այլև իբրև քաղաքական-վարչական և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող համակարգ՝ ընդլայնեց պաշտոնական լեզվի գործառնությունը:

Ի հայտ եկավ վարչաբանությունների տեղական համակարգ: Մրա միավորները նախապես բաղադրվում էին *Լեռնային Ղարաբաղ* կապակցությամբ՝ ԼՂՀ, և նրանով հարադրված՝ ԼՂՀ ԱԾ/Կառավարություն և այլն: Չնայած սահմանադրությամբ ամրակայված էր, որ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն* և *Արցախի Հանրապետություն* անվանումները նույնական<sup>3</sup> են, և 1991թ. Հաստատված զինանշանում համագոյակցում էին ԼՂՀ և *Արցախ* անունները, սակայն երկար ժամանակ գերակայում էր ԼՂՀ-ն: Ավելի ուշ կազմավորված վարչական անվանումների մի մասում պահպանվեց *Արցախ* բաղադրիչը՝ Արցախբանկ, Արցախէներգո, Արցախգազ, Արցախփոստ, Արցախպրես, ԱրՊՀ, ԱՊՎՄ (Արցախյան պատերազմի վետերանների միություն) և այլն:

*Արցախ* անունը, որ Շարժման առաջին օրերից վերագործառնեց գրական լեզվում, կենսահայեցողական և լեզվական ազատականացման պայմաններում, բավականին ընդլայնեց բառակազմական հարացույցը:

Այսպիսով՝ Արցախյան շարժումով վերսկսվեց *Արցախ* և *Ղարաբաղ/Լեռնային Ղարաբաղ* անունների ձևային-գործառական որոշակի հարաբերակցությունը: Որպես ազատ տարբերակներ՝ նրանք կան գրական լեզվի ենթառճերի մեծ մասում՝ արցախյան-ղարաբաղյան, Արցախյան շարժում-Ղարաբաղյան շարժում, Լեռնային Ղարաբաղ-Լեռնային Արցախ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Արցախի Հանրապետություն, հակաարցախյան-հակաղարաբաղյան, արցախահայ-ղարաբաղահայ և այլն: «Արցախի գրական օջախի պողերը անթեղված են Մեսրոպ Մաշտոցի՝ Հայոց Արևելից երկրում բացած հինգ դպրոցներում և իրենց թեժությունը բերել են ամենահեռավոր, վաղնջական ժամանակներից: ...Եվ պատահական չէ, որ Ղարաբաղի մշակույթի մեջ առաջնակարգ տեղը պատկանում է գրականությանը»<sup>4</sup> : Կամ՝ «Մեզ, ինչպես նաև ամբողջ երկրին վախեցնում են նրանով, որ Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղը վերամիավորվելու դեպքում ադրբեջանական բնակչության բողոքը կարող է ծայրահեղ ձևեր ստանալ... Հավանաբար, համապատասխան պահին անհրաժեշտ կլինի նրանց համար որպես Արցախի ազգային փոքրամասնության, հատուկ ապահովել այդպիսի հստակ և իրական երաշխիքներ»<sup>5</sup>: Պաշտոնական ոլորտում նաև ստեղծվեց *Արցախ-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն* համարժեքությունը, օրինակ՝ պետական զինանշանի վրա, իսկ Շարժման առաջին տարիներին գիտահանրամատչելի և հրապարակախոսական ոճերում կար *Արցախ-ԼՂԻՄ* համարժեքությունը. «Այսպիսով, հենց Արցախում է առաջին անգամ սկսել ձևավորվել այնպիսի քաղաքական համակարգի մոդելը, որով այսօր կողմնորոշվում են երկրի (ԽՍՀՄ-Ս.Շ.) շատ ռեզիդենտների դեմոկրատական ուժերը»: «Արցախի պահանջներն ու քաղաքականությունը անհիմն կերպով որակվում են որպես հակասահմանադրական»<sup>6</sup>:

Հրապարակախոսական և գիտահանրամատչելի ոճերում գործառում է *Արցախ-Ղարաբաղ* առնչակից բաղադրիչների հարակցումով կազմությունը: Այն ըստ էության ունի երկրի ոչ միայն պատմական, այլև ներքին և արտաքին անունները միասնությամբ ներկայացնելու միտում : Ըստ բառակազմական օրինաչափության՝ նման անվանական հարակցություններն արտահայտում են միասնության, ամբողջության, հավաքականության իմաստ<sup>7</sup> :

<sup>1</sup>Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ, Եր., 1979, էջ 2:

<sup>2</sup>ԼՂՀ սահմանադրություն, հոդված 15:

<sup>3</sup>ԼՂՀ սահմանադրություն, հոդված 1, կետ 2:

<sup>4</sup>Արցախ-դաժան սեր, Մտեփ., 1999, էջ 3:

<sup>5</sup>Ղարաբաղյան հարց, Մտեփ., 1991, էջ 140:

<sup>6</sup>Ղարաբաղյան հարց, էջեր 159, 161:

<sup>7</sup>Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 228:

Երկու անունների համագոյությունն ընդհանրապես հնարավոր էր այն բանի շնորհիվ, որ նրանք մասամբ զրկվել էին պատմական հիմքից: *Արցախ*-ի Կուր-Արաքսյան ընդգրկման , իսկ *Ղարաբաղ*-ի՝ երբեմնի պատմական Արցախի և Սյունիքի միավորված վարչատարածքի՝ պատմական հիմքի կորուստից հետո՝ *Արցախ* և *Ղարաբաղ* անունները հայկական գիտակցության մեջ հարաբերվում են իբրև դարաբաղցիներով կամ արցախցիներով բնակեցված վայր՝ ենթարկվելով իմաստային-գործառական նեղացման<sup>2</sup>:

Այսպիսով՝ պատմական հենքից վերացարկվելու հետևանքով նշված անունները որոշակի համատեքստում համագործությամբ են օժտված: Մակայն նկատելի է, որ հասարակական-քաղաքական հեղինակությամբ գերակայում է *Արցախ*-ը, քանի որ հայկական գիտակցության մեջ նաև գոյություն ունի *Արցախ-Ղարաբաղ* անունների տարբերակումը *հայկական-օտար* հիմունքով: Մա սերտ կապված է էթնոգիտակցության, պատմության վերաարժևորման հետ: Հենց Արցախյան շարժման ընթացքում պատմական անցյալից փոխառվում էին ազգային արժեքներ, որոնց կենտրոնում պատմական հայրենիքի գաղափարն էր: Մա գեղարվեստորեն ներկայացրել է Մ. Հովհաննիսյանը. «Հիշեցինք, խարկած մեր հիշողությունը բորբոքեցինք ու հիշեցինք, որ մենք, ախր, Ղարաբաղ չենք, Արցախ ենք»<sup>3</sup> : «Շատ էր պետք Ադրբեջանական գործոնը, որովհետև արցախցի դարձած դարաբաղցիներից ուրիշ կերպ չես պրծնի»: Արցախյան շարժումից հետո գրական տարբերակների մեծ մասում աստիճանաբար գործառապես գերակայեց *Արցախ*-ը, իսկ գեղարվեստում և հրապարակախոսության մեջ բարձրագույն արտահայտություն ստացավ *Արցախական աշխարհ* պատմական կապակցությունը:

«Լեզվական տարբերակների միջև հարաբերությունները կարող են բնութագրվել համագործությամբ կամ որևէ մեկի գերիշխանությամբ: Որևէ տարբերակ գերիշխել կարող է իր հասարակական հեղինակությամբ, կիրառության ոլորտներով, խոսքային հանրության շերտերով, խոսքաշարային իրադրություններով, գործածականության հաճախականությամբ: Մրցակցություն նշանակում է պայքար ոլորտների , իրադրությունների և, ի վերջո, հեղինակության համար: Մրցակցության ընթացքը նշանակում է տարբերակների հարաբերությունների փոփոխություն»<sup>4</sup>:

Նշվածը վերաբերում է նաև *Արցախ-Ղարաբաղ* անունների հարաբերությանը: Հասարակական հեղինակությունը խոսակցականում առայժմ Ղարաբաղ-ի օգտին է, իսկ գրական լեզվում՝ Արցախ-ի: Մա հետաքրքիր կերպով արտացոլված է նրանց իմաստային դաշտում և բառակազմական հարաբերությունը: Արցախ-ն ինքնին և նրանով բաղադրվածներն աչքի են ընկնում բարձր ոճայնությամբ, մինչդեռ Ղարաբաղ-ով բաղադրվածները, առավելապես *դարաբաղցի* բառը, խոսակցականում և սրանից էլ հրապարակախոսության մեջ (իսկ վերջինս քանի որ ունի քարոզչության, գնահատողական վերաբերմունքի հիմնական տարրեր, ուստի անտարբեր չէ խոսակցականի նկատմամբ), ստացել է քաղաքական երանգ: Կարող ենք բավարարվել Մ. Էլոյանի նորակազմությունների բառարանի տվյալներով, ըստ որի՝ *դարաբաղցի* բառի երկրորդ իմաստն է՝ Հայաստանը դարաբաղացնելը՝ Քանի որ չհաջողվեց իրականացնել Ղարաբաղի հայաստանիզացիան, ապա միայն մնում է հասնելու Հայաստանի դարաբաղիզացիային: Կամ՝ *դարաբաղեցնել*՝ Մերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել, ըստ որի՝ ...ովքեր տիրապետում են դարաբաղեցնելին, աշխատավարձը բարձրացվում է հինգ անգամ:<sup>5</sup>

Գրական լեզվի համատեքստերում նաև Ղարաբաղ-ը կապվում է խորհրդային, Արցախ-ը՝ հետխորհրդային՝ Վերածննդի ժամանակաշրջանի հետ : Օբյեկտիվ տարբերակման հիմունք է նաև Ղարաբաղ անվան գործածությունը պատմական այն ժամանակաշրջանի համար, երբ այն

<sup>1</sup> «17-րդ դարից Ղարաբաղի (Արցախ և Սյունիք) հայերին անվանում էին քաջ պարսկահայեր»(Լեո, Երկեր, հ.3, էջ 336, Եր., 1969): «Այդ նահանգները՝ հին Արցախն ու Սյունիքը, որ նոր ժամանակներում մի ընդհանուր անվամբ կոչվում էին Ղարաբաղ» (Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 3, Եր., 1994):

<sup>2</sup>Այս պարագայում տարբերակվում են պատմական Արցախ-Արցախ-Արցախի Հանրապետություն անվանումները:

<sup>3</sup>Հովհաննիսյան Մ., Մենք, Եր., 1989:

<sup>4</sup>Չաքարյան Հովհ., «Փոփոխակումը որպես լեզվի զարգացման նախադրյալ», «Չախուկյանական ընթերցումներ», Եր., 2006, էջ 66:

<sup>5</sup>Էլոյան Մ., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002 , էջ 320:

խոսքային համակարգում կար, իսկ Արցախին-ը՝ վաղնջական, հին շրջաններից և ժամանակակից, օրինակ. «Այս ամենի արդյունքը եղավ այն, որ նրանք Ղարաբաղի հետ կորցրին նաև յոթ շրջան, որը փաստորեն պատմական Արցախն է»<sup>1</sup>: Կամ՝ *ղարաբաղցի դառած աղբբեջանցի*<sup>2</sup> արտահայտության մեջ հնարավոր չէ *ղարաբաղցի-արցախցի* փոխարինումը:

Արցախյան շարժումից հետո գրական լեզվում ընդլայնվեց *արցախահայ* կազմության գործառումը, որը կար նաև 19-րդ դարի գրական ոճում: Սույն հոդվածում բառի իմաստային դաշտը և համատեքստային յուրահատկությունները համակողմանի ներկայացնելու անհնարինության պատճառով տանք քաղաքական հանգամանքների հետ կապված մեկ յուրահատկություն:

Պետականության ստեղծումը, քաղաքական-տնտեսական –ռազմական համակարգի աստիճանական ամրակայումը XXIդ. Հիմք դրեցին ԱՀ-ն դիտարկելու իբրև կայացած քաղաքական օղակ, որը հայկական իրականության մեջ ներկայանում է անկախորեն: Արդյունքում *Հայաստան-Արցախ-Սփյուռք* եռամիասնությունը ոչ միայն ազգային-գաղափարախոսական է, այլև քաղաքական, քանի որ աստիճանաբար ընդլայնվող և քաղաքականապես ակտիվացող Սփյուռքը դա է ապացուցում: Արդյունքում կարող են առաջանալ հայկական երկու հանրապետությունների և ներգործող Սփյուռքի հայերի որակական տարբերակումներ: Եվ այն, որ թեկուզ անհատական խոսքում, ի հայտ է եկել *հայաստանահայ*<sup>3</sup> կազմությունը, որն ստեղծվել է Սփյուռքում, նույնպես արտացոլում է հայկական եռակողմ իրականությունը: *Հայաստանահայ-արցախահայ-սփյուռքահայ* շարքում *արցախահայ* բառը (որ համահայկական միասնականության գոյաձևում մերժվում է) ստանում է նոր երանգ, որ նշանակում է *ոչ թե Արցախի հայ, այլ հայ, որ ԱՀ քաղաքացի է և ոչ ՀՀ կամ աշխարհի այլ երկրի*:

Այսպիսով, Արցախյան շարժումը հայկական իրականության մեջ սկիզբ դրեց քաղաքական, ազգային, գաղափարախոսական հեղաշրջումների, որոնց լեզվական արտացոլումները գիտական համակողմանի ուսումնասիրության լայն հնարավորություններ են ստեղծում:

<sup>1</sup>Արցախ-դաժան սեր, Ստեփ., 1999, էջ 8:

<sup>2</sup>Հովհաննիսյան Մ., Մենք, էջ 121:

<sup>3</sup>Պողոսյան Ն., «Նորակազմ բառեր արևմտահայերենում», «Հայոց լեզու և գրականություն», 2002, N1-2: